ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 5

«Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար տնտեսական ապրանքներ, սանիհգենիկ և լվացող միջոցներ ձեռք բերելու նպատակով հայտարարված «ԳՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի.

ք.Գավառ 05 դեկտեմբերի 2019թ.

Սույն թվականի դեկտեմբերի 5-ին ժամը 14.00-ին «Գավառի պետական համալսարան» հիմնադրամում՝ ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1 հասցեում, տեղի ունեցավ համալսարանի կարիքների համար տնտեսական ապրանքներ, սանիհգենիկ և լվացող միջոցներ ձեռք բերելու նպատակով հայտարարված «ԳՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման հանձնաժողովի նիստ:

Նիստին մասնակցում էին հաձնաժողովի բոլոր անդամները՝ հանձնաժողովի նախագահ Ն. Ա. Կուտուզյանը, հաձնաժողովի անդամներ՝ Լ. Գ. Սիրունյանը, Խ. Ժ. Սաֆարյանը, Տ. Հ. Զաքոյանը, Գ. Ն. Աբրահամյանը:

Հանձնաժողովի քարտուղարը զեկուցեց 7-րդ, 12-րդ և 22-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից «Պետրոսյան Հոլդինգ» ՍՊԸ-ի, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից «ՍՅ.ՌՈՒ.ՄԱ» ՍՊԸ-ի և 13-րդ, 15-րդ, 17-րդ և 19-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից «Էկոմիքս» ՍՊԸ-ի կողմից պայմանագրերի նախագծերի հաստատումն ու պայամանագրերի ապահովումները ներկայացնելու մասին:

Հանձնաժողովը գնահատման թերթիկների հիման վրա գնահատեց, որ պայմանագրերի նախագծերի հաստատումը և պայամանագրերի ապահովումները կազմվել և ներկայացվել են սահմանված կարգով և ժամկետներում:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի պահանջներով՝ հանձնաժողովը

որոշեց՝

- ✓ 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից «ՍՅ.ՌՈՒ.ՄԱ» ՍՊԸ-ի և «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի միջև կնքել տնտեսական ապրանքների և սանիհգենիկ միջոցների ձեռքբերման «ԳՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/16(1)» ծածկագրով գնման պայմանագիր, որի ընդհանուր գինը կազմում է 55.515 (հիսունհինգ հազար հինգ հարյուր տասնհինգ) ՀՀ դրամ:

- ✓ 7-րդ, 12-րդ և 22-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից «Պետրոսյան Հոլդինգ» ՍՊԸ-ի և «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի միջև կնքել տնտեսական ապրանքների և սանհիգենիկ միջոցների ձեռքբերման «ԳՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/16(2)» ծածկագրով գնման պայմանագիր, որի ընդհանուր գինը կազմում է 148.560 (մեկ հարյուր քառասունութ հազար հինգ հարյուր վաթսուն) ՀՀ դրամ:
- ✓ 13-րդ, 15-րդ, 17-րդ և 19-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից «Էկոմիքս» ՍՊԸ-ի և «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի միջև կնքել տնտեսական ապրանքների և սանհիգենիկ միջոցների ձեռքբերման «ԳՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/16(3)» ծածկագրով գնման պայմանագիր, որի ընդհանուր գինը կազմում է 90.534 (իննսուն հազար հինգ հարյուր երեսունչորս) ՀՀ դրամ:

Որոշումն ընդունվել է կողմ՝ 5 և դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝	Ն. Ա. Կուտուզյան
հանձնաժողովի անդամ՝	Լ. Գ. Սիրունյան
հանձնաժողովի անդամ՝	Խ. Ժ. Սաֆարյան
հանձնաժողովի անդամ՝	Տ. Հ. Զաքոյան
հանձնաժողովի անդամ՝	Գ. Ն. Աբրահամյան
հանձնաժողովի քարտուղար՝	Ս. Բ. Ղարաբաղցյան